# ՏԵՂԵԿԱՆՔ

**Իրավական ակտերի նախագծերի հանրային քննարկման վերաբերյալ**

**Իրավական ակտի նախագծի անվանում**

«ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ

**Իրավական ակտի նախագիծ մշակող մարմնի անվանում**

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

**Իրավական ակտի տեսակ**

Օրենք

**Ոլորտ**

Սոցիալական ապահովություն

**Հանրային քննարկման ժամկետ**

27/07/2023 - 14/08/2023

**Ստացված առաջարկների արդյունքներ**

Ստացվել է 2 առաջարկ (կայքում առկա առաջարկներից)

Ամփոփվել է 2 առաջարկ

**Քվեարկության արդյունքներ**

1 կողմ

6 դեմ

**Տեղեկանքը գեներացվել է www.e-draft.am կայքի կողմից**

# ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

## «ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

| հ/ հ | Առարկության, առաջարկության հեղինակը, ստացման ամսաթիվը | Առարկության, առաջարկության բովանդակությունը | Եզրակացություն | Կատարված փոփոխությունը |
|---|---|---|---|---|
| | 1 | 2 | 3 | 4 |
| 1 | "Տնտեսական իրավունքի կենտրոն" Հասարակական կազմակերպություն 30.07.2023 17:53:41 | Մովսես Արիստակեսյան "Տնտեսական իրավունքի կենտրոն" ՀԿ նախագահ Դեմ ենք օրինագծին, քանի որ դրանով նախատեսվող իրավակարգավորումը խտրական է և անհավասար և ըստ այդմ հակասում է ՀՀ սահմանադրության 28 և 29 հոդվածներով սահմանված իրավակարգավորումներին: Հետևաբար օրինագիծը պետք է հանվի շրջանառությունից: | Առաջարկը չի ընդունվել: Հարկ է նկատի ունենալ, որ Սահմանադրության 29-րդ հոդվածն ամրագրել է խտրականության արգելքը, որի համաձայն՝ խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելիությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է: Խտրականության արգելքի սկզբունքի վերաբերյալ իր մի շարք որոշումներում Սահմանադրական դատարանն արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումները. «(...) Սահմանադրական դատարանը խտրականության արգելման սկզբունքի շրջանակներում թույլատրելի է համարում օբյեկտիվ հիմքով և իրավաչափ նպատակով պայմանավորված ցանկացած տարբերակված մոտեցում: Խտրականության արգելման սկզբունքը չի նշանակում, որ միևնույն կատեգորիայի անձանց շրջանակում ցանկացած տարբերակված մոտեցում կարող է վերածվել խտրականության: Խտրականության սկզբունքի խախտում է հանդիսանում այն տարբերակված մոտեցումը, որը զուրկ է օբյեկտիվ հիմքից և իրավաչափ նպատակից:» (ՍԴՈ-881), «(...) ենթադրյալ խտրականության դեպքում առկա | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | իրականացնող ստորաբաժանման աշխատողների վրա տարածել նույն իրավիճակում գտնվող այլ սուբյեկտների՝ պաշտպանության, ոստիկանության, ազգային անվտանգության մարմինների և փրկարար ծառայության համակարգի հրամանատարական և ոչ հրամանատարական կազմի ծառայողների, քրեակատարողական ծառայողների, հարկադիր կատարողների համար «Կուտակային կենսաթոշակների մասին» օրենքով սահմանված կարգավորումները: | |
| 2 | Մարինե Հովհաննիսյան<br>27.07.2023 19:17:27 | Առաջարկում եմ փոփոխության նախագիծ ներկայացնեիք նաև ուսուցիչների և մանկավարժական աշխատողների կենսաթոշակի անցնելու տարիքի,աշխատանքային ստաժի մասին: Շնորհակալություն: | Առաջարկն ընդունվել է ի գիտություն: Առաջարկը չի առնչվում «Կուտակային կենսաթոշակների մասին» օրենքի կարգավորման առարկային և շրջանառվող նախագծով կամ նախագիծը ներառող նախագծերի փաթեթով չի կարող անդրադարձ կատարվել առաջարկին: | |